# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքսուտրըդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 13 | Բաճկոն կարճաթև և կիսաշրջազգեստ՝ ամենօրյա, շտաբային Կանացի համազգեստը հարմարեցված է կանացի կազմվածքին, ունի ընդգծող գոտկատեղ և սեղմոններով կրծքամաս, բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի ոչ պակաս քան 235 գրամ մակերեսային խտու-թյամբ, ոչ պակաս քան 44% բուրդ, ոչ ավել քան 54% պոլիէսթեր և ոչ ավել քան 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից: Բաճկոն: Բաճկոնը՝ միալանջ, թիկունքամասը՝ ծավալուն, կոճկվում է կենտրոնական շղթայական կոճկվածքով՝ երկկողմանի կայծակ շղթայով: Կենտրոնական շղթայի վրայից երկայնակի 5.0-5.5 սմ լայնության փակ կափույրով, որը կայծակ շղթայի վրայից կոճկվում է 3 ուղղանկյունաձև 2.5×4.0 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ երկայնքով մշակվում է աստառը՝ ГОUS-20272-2014 8-C5-BШ արտիկուլի կամ համարժեք մուգ կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100 % վիսկոզա: Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14.5-15.0 սմ լայնության և 16-17 սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5.0-5.5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են կոճկվում են 2.5×2.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններով, իսկ գրպաների կողերը դեպի կենտրոնական շղթա գաղտնի ներկարված են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված |

| | |
|---|---|
| | ներկարված, 18.0-18.5 սմ բացվածքով, 1.5-2.0 սմ լայնության շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են պաշտպանական կամ կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Բաճկոնի կողամասերում՝ ներքևի գրպաներին զուգահեռ բարձրության վրա, մշակվում են երկու կոճակով կարգավորվող պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններ կրծքանշանների փակցման համար: Բաճկոնի թևքերը կարճաթև՝ ներքին եզրերը մշակված 2.5-3.0 սմ լայնության մանժետով: Ձախ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի, իսկ աջ թևքի վրա մշակվում է 7.5 սմ տրամագծով կանաչ գույնի կպչուն ժապավեններ: Ասեղնագործ ինքնակպչուններով գրվածքների, տարբերանշանների, ուսադիրների նմուշները և քանակները կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, նմուշի հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Կիսաշրջազգեստը: Երեսացու կտորը ռիպստոպ տեսակի, մուգ կանաչավուն 235գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա մանրաթելերից: Կիսաշրջազգեստը կազմված է առաջամասից, հետնամասից և ներկարված գոտուց: Հետևամասի ներքևում բացվածքով, հետևից վերնամասը՝ շղթայով կոճկվող, որը գոտու վրա կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Կողային կարերում անցկացվում է 1.5-2.0 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կապույտ կամ կանաչ գույնի մահուդից երիզներ: Կիսաշրջազգեստը մշակվում է սեղմոններով և մինչև 2,0սմ լայնացման (անհատական հարմարեցման) հնարավորությամբ , աստառը՝ մետաքսյա 8-C5-ВШ արտիկուլի կանաչավուն գույնի գործվածքից: Կիսաշրջազգեստի արտաքին տեսքը՝ համաձայն ներկայացվող նմուշի, արտադրվում են 38/2 մինչև 62/5 չափս-հասակի (նմուշը և չափս-հասակային սանդղակը տրամադրվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից): Կիսաշրջազգեստի ձախակողմյան փեշին, գոտու ամրացման կարի տակ, ներսի կողմից պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակեր-պությունների անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 13 | Куртка с коротким рукавом и юбка повседневные, штабные Женская униформа адаптирована к женской фигуре, имеет подчеркивающую талию и грудь с застежками, состоит из куртки и брюк. Изготовлена из ткани поверхностной плотностью не менее 235 граммов темно-зеленого оттенка тиап «рипстоп», не менее 44% шерсти, не более 54% полиэстера и не более 2% лайкры. Куртка: Куртка однобортная, сзади - объемная, застегивается на центральную цепочку-молнию с двусторонней застежкой. В продольном направлении поверх центральной цепочки, проходит закрытый клапан шириной 5,0-5,5 см, который застегивается на 3 прямоугольных кноки-липучки зеленого оттенка размером 2,5×4,0 см. В области плечевых погон прорабатываются три петли и два хлястика для крепления плечевых погонов. В передней части куртки по всей длине прорабатывается подкладка из ткани артикула ГОСТ-20272-2014 8-С5-ВШ или аналогичной ткани темно-зеленоватого цвета, с подкладкой из 100 % вискозы. Воротник куртки - отложной, угловые края воротника закруглены. На соединительном шве воротника прорабатывается петля-вешалка. Спереди на грудной части слева и справа проработаны два объемных кармана шириной 14,5-15,0 см и длиной 16-17 см, с клапанами шириной 5,0-5,5 см, которые по всей длине груди застегиваются на кнопки из липучих лент зеленого цвета размером 2,5×2,5 см, а сами карманы застегиваются с боков по направлению к центральной цепочке с помощью потайной пластиковой цепочки- молнии зеленого цвета. На левой и правой частях бортов верх проработаны косые карманы (верхняя часть по направлению к середине) с прорезью 18,0-18,5 см и кантом шириной 1,5-2,0 |

| | |
|---|---|
| | см, загнутым внутрь, застегивающиеся на пластиковую цепочку-молнию зеленого цвета. На внутренней стороне грудной части куртки прорабатывается внутренний карман. По бокам куртки на высоте, параллельной нижним карманам, расположены регулируемые проемы на двух пуговицах. Рукава куртки с коротким рукавом и нижними краями, проработанными манжетой шириной 2,5-3,0 см. На левом рукаве проработана лента-липучка зеленого в форме клина размером 7, 0x9, 0 см, а на правом рукаве - лента-липучка зеленого цвета диаметром 7,5 см. Вышитые надписи на лентах-липучках, логотипы, образцы и количество погон будут предоставлены ОП в течение пяти дней после утверждения образца. На клапанах правого и левого нагрудных карманов, пропорциональных ширине карманов, проработаны липучие ленты зеленого оттенка размерами 2,5×12,5 см, для крепления знаков. Юбка: Лицевая ткань типа рипстоп, темно-зеленоватого цвета с поверхностной плотностью 235 г/м2, 44% шерсти, 54% полиэстера и 2% волокон лайкры. Юбка состоит из передней части, задней части и вшитого пояса. С разрезом внизу задней части, вверху сзади застегивается на цепочку и на одну пластиковую пуговицу с петлей на поясе. В боковые швы продеваются полоски суконной ткани артикула 2481/2581 ИА или аналогичной, шириной 1,5-2,0 мм, синего или зеленого цвета. Юбка проработана застежками с возможностью расширения до 2,0 см (индивидуальная подгонка), подкладка из шелковистой ткани зеленоватого цвета артикула 8-С5-ВШ. Внешний вид - юбки в соответствии с представленным образцом изготавливается в размерах от 38/2 до 62/5 (образец и шкала размеров и роста предоставляются ответственным подразделением). К левому боковому борту е юбки, под строчкой для крепления ремня, с внутренней стороны должна быть пришита этикетка. На этикетке должны быть указаны: размер ассортимента, название организации-производителя, год выпуска. Упаковка: в трехслойных картонных коробках, в одной коробке до 10 единиц, ассортимент в прозрачных полиэтиленовых пакетах, в одном пакете по 1 единице. Коробки маркированные либо пропечатанные, с указанием наименования ассортимента, количество, размер, наименования организации-поставщика и производителя, год выпуска и номер спецификации. |